ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ԱՊ/156-2019

„18„ 10 2019թ.

Ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ <<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 1333-Ն որոշման պահանջներով.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանին 2019թ. պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման "Այլ ընթացիկ դրամաշնորհներ" հոդվածով) հատկացված 570.0 հազ. դրամ գումարը սահմանված կարգով հատկացնել Արարատի մարզի ''Վեդի քաղաքի մարզադպրոց'' համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. '' Վեդի քաղաքի մարզադպրոց '' համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել ընթացիկ դրամաշնորհների հատկացման պայմանագիր՝ "Լավագույն

մարզական ընտանիք” մրցույթի անցկացման համար մարզական հագուստ ձեռք բերելու նպատակով:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Լ. Միրզախանյանի վրա:

18.10.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 **Գ.ՍԱՐԳՍՅԱՆ**